ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 45

25 սեպտեմբերի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի և 31-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 66-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

1. Որոշման թիվ 2 հավելվածի հայեցողական պաշտոնների 1-ին տողի 6-րդ սյունակի <<126000>> թիվը փոխարինել <<131000>> թվով, իսկ 5-րդ սյունակի <<63.0>> թիվը՝ <<66.0>> թվով:
2. Որոշման թիվ 2 հավելվածի հայեցողական պաշտոնների 2-րդ տողի 6-րդ սյունակի <<74000>> թիվը փոխարինել <<80 000>> թվով, իսկ 5-րդ սյունակի <<37.0>> թիվը՝ <<40.0>> թվով: